№ 19 ԹԻՖԼԻՍ ՀՈՒՆԻՍԻ ՄԱՍԻՆ 22

1896

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ ՀՈՒՆԻՍԻ ՄԱՍԻՆ 22 № 19

ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 դրամ. վեցամսեան 6 դ. Պարսկաստանի օտար քաղաքներում 15 դ. վեցամսեան 8 դ. Ռուսաստան 3 ռուբլի. վեցամսեան 2 ռուբլի. Օտար երկիրներում 8 ֆրանկ. վեցամսեան 5 ֆրանկ: Հասցէ՝ Teheran Rédaction ASTGH-AREVELAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԱՆԻ» խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ ազգային օրերին:

Յայտարարութիւնները ընդունվում է ամեն լեզուով. իւրաքանչիւր քառին 1 շահի:

ՀՈՒՆԴԱՊՈՒԹԻՒՆ

Թիւրք կառավարութիւնը եւ Զէյթունի դաշնագրութիւնը. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կեանքի պատկերներ կանոնց շրջանից. Նամակ խմբագրութեան. Նամակ Սալմասից. Նամակ Ջիւրազից. Նամակ Շաւարշնից. Ներքին լուրեր. ԱՂԱՌԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայաստանը եւ Եւրոպան. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ:

ԹԻՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԶԷՅԹՈՒՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1896-ի սկիզբներն էր, երբ թիւրք կառավարութիւնը իւր ամբողջ կասրածներ սարքող Փանսարիկսութիւնով եւ կանոնաւոր ու աւազակներից բաղկացած խուռն բանակովն իսկ, իրեն բնորոշին շարած գտաւ մի բուռն կըռիւ Զէյթունցիների չամամարիների առաջ, եւ 11,000-ից աւելի զոհ տալուց յետոյ ամօթահար և գլխիկոր դիմեց եւրոպական դեսպանների միջնորդութեանը, որի արդիւնքը եղաւ այն, որ հարկադրուեց տեղի տալ Զէյթունցիների պահանջներին ու նոցա առաջադրած և դեսպանների երաշխաւորած 16 յօդուածից բաղկացած դաշնաթուղթը կնքեց. դրանից յետոյ՝ թէ եւրոպական մամուլը և թէ Թիւրքիան ճանաչող քաղաքագէտները հրապարակով հարց բարձրացրին, թէ արդեօք պիտի գործադրւի այդ դաշնաթուղթը, բայց ով պիտի համարձակուէր ասելու չէ, քանի որ այդ՝ երաշխաւորւած էր եւրոպական հզօր տէրութիւնների ներկայացուցիչներից, բայց հիմայ եկ և տես թէ ի՞նչ սքանչելի ճշդութեամբ է գործադրում Սուլթանը իւր կնքած դաշնաթղթի ամեն մի կէտը և յարգում նրանց երաշխաւորներին, որի համար առաջ ենք բերում մի քանի օրինակներ.... Այդ դաշնաթղթի չորրորդ յօդուածն այսպէս է ասում, «կատարեալ եւ ավրողական ընդհանուր ներում [amnistie] ոչ միայն զէյթունցիներին, այլ եւ այնտեղ ապաստանած գիւղացի ներին ճամբորդներին եւ հայ հրամանատարին խումբերին»:

Իսկ հակառակ այս յօդուածին լսում ենք որ նոյն տեղերի և շրջակայքի ձերբակալութիւնները և բանտարկութիւնները շարունակւում են այնպէս որ բանտարկեալների կանայք և ազգականները մասնաւոր աղերսագրով դիմել են Սուլթանին յիշեցնելով դաշնագրի 4-րդ յօդուածը»:

Նոյն Դաշնագրի 13-րդ յօդուածն այսպէս է ասում. 13) «Օսմանեան բանակը պիտի ձգէ Զէյթի ամրոցը եւ հեռանայ, միայն արտաքին յարձակումներու դէմ պահպանութեան համար պիտի մնայ մի զունդ զինուոր. այդ զունդը սրեւէ իրաւունք չունի միջամտելու Զէյթունի բոլոր ներքին գործերուն եւ անոր խաղաղութեան պահպանման»:

Իսկ այդ յօդուածին հակառակ մեզ պաշտօնապէս տեղեկացնում են, թէ թիւրք կանոնաւոր և անկանոն զօրքը դեռ աւերում և քանդում է Զէյթունի և իւր շրջակայքի հայերի կալուածները, և թէ այդ խառը զօրքի և Մաբաշի կառավարի ու ընդհանուր հրամանատարի ներկայութիւնը կարող է մի նոր կոտորած ստեղծել....

Դաշնագրի հինգերորդ յօդուածն է 5) «Պիտի հաստատւի մի քրիստոնեայ կառավարիչ, որ պիտի ընտրի եւրոպական պետութիւններու հաւանութեամբ»: Այս յօդուածը շատ ճշգութեամբ է գործադրել (!!!) որովհետեւ Զէյթունցիներին խաղաղ չմոռնելու համար ապրիլի 5-ին Սուլթանն աճապարեց Մահմուտ Բէյին Զէյթունի կառավար որոշել. իսկ ինչ վերաբերում է յօդուածի այն կէտին, որ այդ կառավարը պիտի ընտրւէր դեսպանների հաւանութեամբն, այդ էլ շատ բարեխղճութեամբ է կարգադրել (!!!) այդ մարդին ապրիլ 14-ին մեծ եպարքոսը պատասխանում է դեսպաններին թէ դրժուարութիւնը շուտով կը վերջանայ գոհացուցիչ կերպով: Նոյն ամսի 21-ին Բ. Դուռը ձանձրանալով դեսպանների դիմումներից յայտարարում է թէ Զէյթունի խռովութիւնից անմիջապէս յետոյ քրիստոնեայ կառավար ընտրելը կարող էր գրգռել թիւրք խուժանին, այդ պատճառով է որ Սուլթանը առ ժամանակեայ կառավար ընտրեց Մահմուդ բէյին. ահա ձեզ հմուտ քաղաքագէտի պատասխան... Այս բոլորը մի ընդհանուր քաղաքականութեան կրկնութիւն լինելով. մեզ իրաւունք է տալիս հաւատալու, թէ թիւրք կառավարութիւնը Զէյթունի դաշնաթղթի գործադրելու համար էլ նոյն խաղն է սարքել ինչ որ սարքեց մի ամբողջ տարի 6 հզօր տէրութիւններին քաղաքական ասպարէզի մէջ ձգելու և նոցա միամտութեան վրայ լի սրտով ծիծաղելու.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Կանոնց շրջանից

Շարունակութիւն № 17-ից

Աղջի էս օր մի բան եմ լսել, զօրթ է, ասումեն թէ Ձեր դուռն յայտարարութիւն են կպցրել, տեսնես որ անիծւածի բանն է:

Ի՞նչ յայտարարութիւն, ի՞նչ էին գրել, ես նոր եմ լսում: Էհ՝ յիմար յիմար բաներ, ապառնական ձևերով գրեր էին թէ կ՚սպանենք եթէ փոքն նպատակին չհասնի, Ձեզ զգուշացնում ենք .....

Մարդ կարծում էին որ ճուտ ենք վախենանք

Վայ՝ թէ խնդիրն վատ կերպարանք ստանայ, զօրթն շատ եմ փոխեցնում, ջանս սկսեց սառուել, չլինի ՀԷկ փորձանքի պատահէինք:

Ըհ՝ դու էլ ինչ վախկոտն ես միթէ մարդ սպանելն հեշտ բան է որ այդպէս շուտով վախենում ես.....

Գիտէք ինչ կայ, էս դուք էս էլ ձեր տեսակն զօրթն ես էլ բան չունիմ:

Չէ, քեզանից էլ օգուտ չկայ, բայց գոնէ մի բան գրիր տեսակէ մէջ:

---Լաւ, լաւ, յետոյ կը գրեմ:

Էլի մեր բողոքականները, տեսաք ինչ առատաձեռնութեամբ ի սրտէ օգնում էին, բայց Ձեր լուսաւորչականների որի մօտ գնացինք ամեն մէկն մէկ ածականով մեզ կնքեց ու ճանրեց:

Ախր նրանք էլ մեզք չունեն, վարժարանի տալիս են, ժամի տալիսեն, ընթերցարանի տալիս են, Տէր-Տէրի տալիսեն, վարդապետի տալիսեն, էս օր մի աղքատ երկաւ տալիս են մի խաչագող եկաւ տալիս են, էլ ո՞ր մէկն համբրեմ այնքան տալիսեն որ էլ բան չի մնում սովեալներին տան, բայց էլի չեն կենան թէ և կանայքն քիչ դժուարանում են օգնելու, բայց մալդիկն առատաձեռնութեամբ օգնում են:

Բայց գիտէք որ այն օրից երբ պատկեր ձգելու խնդիրն մէջ եկաւ, մեր գործն աւելի յաջող է գնում, ախր գիտէք որ կանայք միշտ փառասէր են լինում, և հէնց այդ էլ գրգռեց նորանց և պատճառ դարձաւ իւրեանց առատաձեռնութեան:

Ըէն կենան, Աստուած նորանց տուածին մէկին հազար, մէկին բիւր փոխարինի, Աստուած էն խեղճ սովեալներին որոնք մնացելեն որբ, անտուն, անտէր նրանց էլ խլճա, շատ ցաւալի է.....

Ինչպէս ասեմ որ ձեզ էդ որը յցոդի բալէն մեռնի, կատր կատր էլնի, ն ուլանց դլդդի տունն էլ աւերի,

կործանուի, ինքն էլ մի կտոր հացի համար գանէ գուռն ընկած հայ մարդ և մեզ պէս մնայ սև երեսու--էլի մենք, թէ և հիմա ամաչում ենք բայց վերջը այս մեր փառքը և պարծանքը կ'լինի, բայց նա........ախ նա հազար գուռն մանգալ, մէկ կտոր չոր հաց չէգտնի աչքը խրելու համար....՜հ Ողորմած Աստուած էլ դատաստանդ ո՞ր օրուան համար ես պահել........։

Սալեաճ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան 20 Մայիս 96

Յարգելի խմբագրութիւն հաճեցէք նամակիս մի անկիւն շնորհել.

Երեք շաբաթ է ի վեր է, որ Թէհրանի հայ գաղթականութիւնը զբաղուել է մի սքանչելի խնդրով, այն է, ազգային բոլոր գործերին վերահսկող մի մարմին կազմակերպել հոգաբարձու, վերահսկիչ կամ վերջապէս ազգային ժողով անունով, որի բռնելիք ուղղութիւնն արդէն իւր անուան հետ կապուած է։ Այս մասին քանի ժողովներ եղել են, ուր ինչպէս սովորութիւն է ամեն տեսակ դիտողութիւններ, առաջարկութիւններ և վիճաբանութիւններ եղան, խնդիրն մի պարզ, սակայն հաստատուն կերպարանք տալու համար։ Ինչպէս ասացի առաջարկութիւններ շատ եղան և այդպէս էլ հարկն էր պահանջում, բայց թող որ ընթերցողը չզարմանայ երբ ասեմ թէ այդ առաջարկութիւնների մէջ ա՛լանջի էր գարկում երբեմն այնպիսի խօսքեր որ (ինչպէս առածն է ասում) եփած հաւի ծիծաղն էր գալիս, օրինակի համար մի անկիւնից առաջարկւում է թէ օտարահպատակներ ընտրութեան մէջ իրաւունք չպիտի ունենան, միւս կողմից լսւում է մի այլ առաջարկութիւն, այն է թէ օտարաքաղաքացիքն այդ ազգային ժողովում ընտրելու և քւէարկելու իրաւունք չպիտի ունենան, ի վերջոյ ձայն է բարձրանում և լսում ենք մի բաւական լուսամիտ երիտասարդի այն առաջարկը, որ բաւական յուզումն է առեղծում մեր գործող և հասկացող երիտասարդութեան մէջ, այսինքն, ‹ բողոքական հայերը չպիտի կարողանան մասնակցել այս ժողովին»։

Շատ լաւ, հիմայ քանի որ հերթը մերն է, մենք էլ պիտի անենք մեր առաջարկներ և դիտողութիւնները. Պարոնայք, նախ որ օտարահպատակներին մասնակցելու իրաւունք չտալը, նշանակում է ամենքս ցանկացած ազգային ժողովի ՝չ հաստատութիւնը, քանի որ այսօր մերԹէհրանի 300 տուն հայերիս կէս մասն օտարահպատակ է իսկ մնացեալի էլ 90 0|0 ոսկերիչ, դերձակ, կօշկակար և օղեվաճառ լինելով մնացած 10 0|0-ից կազմակերպւած մի ժողովի ուժերը յայտնի է թէ ի՞նչ պիտի լինի. ուստի ինչու և ինչ օրէնքով նորանց իրենց ազգային իրաւունքից զրկել և ինչ վնաս կարող է ունենալ նոցա մասնակցութիւնը. երկրորդ, որ առաջարկւում է թէ օտարաքաղաքացիք չմասնակցին այս խօսքը ինձ առիթ է տալիս հարցնել թէ, տեղիս հայերից ո՞ր մէկն է բնիկ թէհրանցի եթէ ոչ հեռու քաղաքներից և մասամբ արտասահմանից եկողներ են. ուրեմն այդ ազգային ժողովը ո՞ր ժողովուրդից և որի համար պիտի ընտրուի.

Իսկ ինչ վերաբերում է տեղիս բողոքական հայ համայնքի մասնակցելու իրաւունքին, ցաւօք սրտի պիտի ասեմ որ չարաչար սխալւում են նորանք որ հաւատում են թէ բողոքականներն ընտրել և ընտրուելու իրաւունք չունեն, որովհետև իբրև ամենաչնչին բողոքական անդամ, կրօնքս չպիտի կարողանայ ազգային իրաւունքները ձեռքիցս խլել. բայց ինչ էք հասկանում բողոքական ասելով այսինքն հրէա՞յ, պարսի՞կ վերջապէս օտարազգի՞, ոչ, որովհետև մինչև այսօր որ և է կրօնք չի կարողացել ազգութեան մէջ որ և է փոփոխութիւն առաջ բերել. ես կարող եմ բողոքական, լուսաւորչական կամ վերջապէս կաթոլիկ լինել, բայց երբ խնդիրը գալիս է ազգային շահ և վնասին, այդտեղ ոչ ոք չի կարող ինձ, իմ ազգիցը ջոկել, որովհետև հայ ծնուել հայ էլ պիտի մեռնեմ. հետևաբար իմ պարտքս է փարել իմ ազգիս, ունենալ այնտեղ իմ ազգային իրաւունքները, շահ և վնասը և այդ ամենի պաշտպանութեան իրաւունքը. իսկ այս ամենից յետոյ էլ չեմ կարող հասկանալ նաև այն սկզբունքին որ տարբեր դաւանանքներին պատկանող ընտրուածները եկեղեցական գործերի և կարգադրութիւններին մէջ չպիտի կարողանան խառնուել, որը մի տեսակ փոխադարձ իրաւունք է ամեն կողմի համար. իսկ ինչ վերաբերւում է ազգային գործերին, ամեն մի հայ, առանց կրօնի խտրութեան իրաւունք պիտի ունենայ թէ ընտրելու և թէ ընտրուելու. ինչ է նշանակում ազգի մէջ բաժանումներ գցել. խտրութիւն և խռովութիւն առեղծել, մի մոռանաք որ մեր ազգը մեծամեծ վնասներ ունեցաւ նոյն իսկ այս կրօնական խտրութիւն առեղծելուց... Եթէ այսօր բողոքական հայը, վերջին 50 տարւայ իւր լուսաւորչական եղբայրներից տեսած հալածանք, բանադրանք և սոսկալի ատելութիւնը ազնւութեամբ մոռացութեան տալով ջանանում է միանալ իւր ազգին, նրա բաժանուած և ջլատուած ուժերը միացնելու համար, կարծում էք թէ խոհեմութի՞նն է լուսաւորչականների բացարձակ մերժումն այդ դէպքում. նա էլ լինի քիչ շատ կրթուած դասակարգի կողմից, սորա պատասխանը թողնելով ընթերցողներին, պիտի ամփոփեմ խօսքս այս քանով, որ կազմակերպուելիք որևէ ազգային մարմնի մէջ բողոքական հայն էլ պիտի ունենայ իւր մասն ամենայն նկատմամբ. մինչև անգամ ծրագիրը մշակող մասնաժողովը իւր մէջ պիտի ունենար բողոքական անդամներ որպէսզի նրանք էլ կարողանային բողոքական համայնքին վերաբերող իրաւունքները առհմանել, ապագային խռովութիւններ չունենալու համար.

Լաւ է որ մէկ կողմ թողնենք կրօնական մոլեռանդութեան հայեացքը, և ազատամտութեամբ ջանանք ազգային բոլոր գործերը այն գիրքի մէջ դնել, որ ամեն մի հայ պարտաւորի ազգիս վերածնութեան համար իր ջանքը չը խնայել։

Մի Բողոքական.

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

----

6 մայիս 96

Սալմաստ գաւառի հարաւային կողմում, Սոմայի լեռների ստորոտներում գտնւում է Սառնա հայաբնակ գիւղը, բաղկացած 80 տուն բնակչով որոնք պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ, ունին մի հնօրեայ քարաշէն եկեղեցի Ս. Աստուածածին անունով որը մօտ 220 տարւայ շէնք է և երկու քահանայ։ 95 թւականին այստեղ շինած է նոյնպէս մի դպրոց, որտեղ սովորում են 30-ի չափ հայ մանուկներ. Ժողովուրդը շատ սարըն աչքով է նայում դպրոցի վրայ։ Դժբաղդաբար ագէտ ծերունեաց և նախանձոտ քահանայից (այստեղի հին ուսուցչից) գայլայթը շարժելով նոր մեթոդով դասաւանդութեան վրայ ամեն կերպ աշխատում են ժողովրդին գրգռել դպրոցի դէմ, առարկելով թէ «Օրհնեալ ժողովուրդ, էլ ինչ էք ուզում աշա ուսուցիչը Սաղմոս, Ժամագիրք, գործք առաքելոց թողած, մարիամի լեզու, շուն կատու է սովորեցնում ձեր տղաներին» և շատ այդպիսի զրախօսութիւններով յուսահատեցնում նրանց.

Գիւղի արևմտեան ծայրում գտնւում են նոյնպէս ուրիշ երկու փոքրիկ հողաշէն եկեղեցիք էլ, որոնցից մէկը 94 թւականին է վերանորոգուած իսկ միւսը մօտ հարիւր տարւայ շէնք է. ունի իւր ուխտի օրը. (զատկից մի շաբաթ յետոյ) գաւառի ամեն հայաբնակ գիւղերից այստեղ է գալիս ուխտաւորների մի մեծ բազմութիւն, բաւական նւէրներ է տրւում եկեղեցու անունով բայց ափսոս որ մինչև այժմ գիւղացիք չեն մտածել գոնէ այդ արդիւնքը տընտեսագէտ անձանց միջոցաւ գիւղի աղքատիկ եկեղեցու և դպրոցի օգտին գործադրել որոնք օգնութեան կարօտութիւն ունին և չթողնել որ առաջուայ պէս զանազան քահանաների և տէրտացիների կոկորդը մտնի։ Միայն ուրախալի է ասել, որ գաւառի առաջն. փոխանորդ Հայր Արսէն վարդապետը այս տարի այդ օր այստեղ պատարագ մատուցանելով յայտարարեց որ այսուհետև այդ եկեղեցու արդիւնքը սեփհականացնեն դպրոցին։ Ցաւալի է որ այդ միջոցը կիրագործւի, որով գիւղացիք կարող կլինեն այդպիսի նպաստներով դպրոցը քիչ շատ բարեկարգել։ Վերոյիշեալ եկեղեցին ասորերէն կոչւում է Մար-Իլախոնիա, այդ անունը իրենց ձեռքին փաստ ունենալով 94 թ. Խոսրովա գիւղի ասորիք իրենց հովիւ Կաշայ-Իսաղի առաջնորդութեամբ յարձակւեցան եկեղեցու բանալին խլեցին, բայց շնորհիւ Հայր Արսէն վարդապետի, կրկին եկեղեցին հայերին սեփհականւեց։ Գիւղը պատկանում է պարսիկ աղաների որոնք ամեն միջոցներով հարստահարում են բնակիչներին։ Քսան տարի առաջ գիւղացին իւր ստացած ցորենի 1|10 մասը տալիս էր աղաներին, բայց երբ որ ժողովուրդը ակարացած է այդ իրաւունքը խլած են ձեռքէն և մինչդեռ հողը ժողովրդին է պատկանում այնու ամենայնիւ արքունի կալւածական հարկը (որը ցանւած տարին մէկ բեռանը 12 դ. 10 շահի) իրենք տալով ւէրութեան գանձարանին խեղճ երկրագործի վաստակի երրորդ մասն են իրենք վերցնում. սրա վրայ աւելացնելով և զանազան տուրքեր խեղճ գիւղացին ինչպէս կարողանայ իւր ընտանիքը կերակրել. մինչդեռ իւր քրտինքի վաստակը օտարն է ուտում, ի հարկէ պանդխտութեան է դիմում. 88 թւականին գիւղացիք աղաների այդ վարմունքի պատճառաւ կառավարութեանը բողոք տւին և մօտ 1000 թուման ծախսելով հազիւ կարողացան Դավրէժի նահանգապետ Ամիր-Նիզամից հրաման ստանալ, որ այլ ևս աղան իրաւունք չունենայ բերքի մէկ երրորդ մասը վերցնելու, բայց զանազան պատճառներով այդ չիրագործւեց։ Այս տարի էլ նոյնպէս քանիցս անգամ հեռագիր է տրւած Վեհ. Շահին նրա գթութիւնը հայցելու։

(Կը շարունակւի)

ՆԱՄԱԿ ՇԻՐԱԶԻՑ

----

4 Մայիս 96

Հաճեցէք տեղ տալ Ձեր թերթի մէջ հետևեալ նամակիս։

Քանի ժամանակ էր, որ տեղիս բնակիչները գանգատւում էին այն մի շարք ձախորդութեանց համար, որ յառաջացել էին մորեխից,[3] սև փողի տարբերութիւնից և ջրերի յորդելով տների կործանւելուց, այդ բոլորը գուցէ մոռացւէին եթէ վերջին աւելի սոսկալի դժբաղդութիւնը վրայ չը հասնէր։

Ամսոյս 14-ին, ժամը երեքին կայծակի արագութեամբ ամեն տեղ տարածւեցաւ Վեհ Շահի մահւան լուրը, անմիջապէս խանութները փակեցան եւ փախչող փախչողի եղաւ, մի քանի փոքրիկ խանութներ կողոպտւեցան, բայց կեանքի դէմ վնաս չեղաւ։

Հետևեալ օր մի քանի թնդանօթների որոտը աւետից Ն. Մեծ. Մուզաֆրէդդին Միրզա գահաժառանգի թագաւորութիւնը այդ լուրն էլ չկարողացաւ խաղաղութեան մէջ դնել վայրենի ժողովրդին, այնպէս որ Ն. Մեծ. Ռուքնըդովլան (հանգ. շահի եղբայրը)----քաղաքապետը ստիպւեց քաղաքը կատարելապէս զինւորութեան մէջ դնել։

Քաղաքի շրջակայքն էլ խառնակութեան և շփոթութեան մէջ են, մի քանի գիւղւորներ էլ սպանել են։

Վրանաբնակ Արաբներն և Թիւրքերն էլ դուրս գալով իրենց տեղերից մօտեցել են քաղաքին և ամեն տեղ կողոպտում, սպանում են։ Անգլիացի և հոլանդացի վաճառականների մեծ արժէք ապրանքները ճանապարհին կողոպտել են, հեռագրալարը կտրել են հաղորդակցութիւնը խզելու համար։ Այդ դրութեան մէջ բնականաբար շրջակայքի հաղորդակցութիւնը դադրել է և տեղի է աւել կենսական մթերքի անհաւատալի սղութեան։

Զօրք և թնդանօթներ են դրկել այդ վրանաբնակների դէմ սակայն հաւատացնում են, որ դրանց թիւը նուազ է 80,000 վրանաբնակ հրոսակներին հնազանդութեան բերելու։ Քաղաքապետը օրական 5, 6 հոգի կսպանէ սակայն զգալի փոփոխութիւն անտեսանելի է։ Անցեալ գիշեր մի խումբ սրիկաներ յարձակւում գործեցին հրէից թաղի վրայ, սակայն զինւորներից յետ մղւեցան։ Հեռագրատունն և կայսերական բանկը բաց են ամեն օր, բայց միւս բոլոր խանութները մեծ թէ փոքր բոլորն էլ կողպուել են։

Հայերն ապաստանած են իրենց փոքրիկ թաղում, ուր հազիւ թէ տասն տուն լինին, միւս չորս հինգ տներն ես ցի-

...ուցան են այս կողմ այն կողմ, բայց մէկին կեանքի վնաս չէ հասել:

Միքայէլ Յարհանեսեան.

ՆԱՄԱԿ ՇԱՒԱՐԻՆԻՑ

Շարունակութիւն № 17-ից

Բայց հաւատամք էք, որ Շավարինի «ազգուկ» ուսուցիչը հոգաբարձութեան ...ծելով եւ դպրոցի քայքայելովը ...ական եղաւ, ո՞չ որովհետեւ նա իւր պահանջներն ունի, ինչ հոգն է որ դպրոցը պիտի քանդի, աշակերտները մէկ մէկ պիտի երթան Ամերիկացի միսիոնարների դպրոցը, նա իւր դրամն ուզում, ծառայութիւն շարած տարայ ոռճիկն է պահանջում եւ որ այս ...ղծանքը կիրականաց մնալուն համար դիմում է իւր եղբօր քահանայական ուժին, որն օրէկան մի նոր տակ հրաման է արձակում խեղճ եւ ...ատաբ ժողովուրդի գլխին: Մէկ օր ...նում ես, որ եկեղեցու ճակատիցը ...ում է, թէ ինքն էլ այսուհետեւ աչք ...զցում բոլոր այն շաւաղինցիների ...յութիւնից, որոնք իրենց երեխաները ...ր եղբօր կառավարած դատարկ դպրոցից հանելով յանձնում են քողոքականների քիչ շատ կանոնաւոր ուսումնարանին, եւ թէ այսուհետեւ նոյն ննջեցեալները չպիտի թաղի, մարդիկները չպիտի մկրտի եւ այլն եւ այլն---Մի օր տեսնումես որ այսինչ անդիսից հայհոյանքով եւ յիշոցներով ...նտել է տալիս այն անձնաւորութիւններին, որ իւր եղբօր պահանջած, ...ակայն անտեղի ոռճիկը վճարելուն ...տարկութիւն են արել..... Այս բոլոր անցուդարձից յուսահատ ժողովուրդն իւր անելիքին անզէտ, շարած ...նացել է. ի՞նչ անի, ուզի երեխին իւր ...ով կառավարող դպրոցն ուղարկել, հօ ոչ ուսուցիչ կայ եւ ո՛չ էլ դաստուութիւն բացի գիւղական կեղտարկը ճանճ քշել.....իսկ եթէ ուզում է ...ղարկել քողոքականաց դպրոցն, այդ ...ն հօ տգէտ եւ շահախնդիր քահանայի ...անդրանքնէ իւր գլխին ընդում..... ...յպէս է այսօր Շաւարին գիւղի. հա...ի դրութիւնը: Քահանայական ընտա...իքն իւր ամբողջութեամբն ինչպէս ...արդ խեղճ ժողովրդին ճանճի պէս պա...արել է. հոգաբարձութիւն էլ խռոված ...ներեի նման 8. ամիսէ իվեր մի անիւն քաշած, թթուած դէմքով նայում է ...յս ընչերին.....Բայց այստեղ, ո՞չ ...արդ ո՞չ ճանճ եւ ո՞չ էլ խռոված հոգաբարձութիւնն է տուժողը, եթէ ոչ ...մեղ երեխայք, որոնք մնում են ...ատաբ արածներն նոյն, ինչոր իրենց ...ալրերն ու պապերը: Ուստի անտանելի ...դէտի եւ մի ափ գիւղացի ժողովրդի ...խին զալիք դժբախտութեան աղաչն ...ելու համար, խնդրում ենք մեր ...ոնհաս ազգայիններից, մ՚անուանդ ...փոխանորդ հայր Այվատեանից, որ ...անան այս ամենի համար մի կէր ...նել, կրթասիրաց կիսամեռ ընկերութեանը նոր հոգի տալով, գիւղիս ...եղեցական, մանաւանդ դպրոցական ...ծներին յաջող եւ յուսալի ընթացք ...ան. իսկ հակառակ դէպքում; մեր կողից աւելորդ է բացատրել, թէ ինչ տրոր հարուած պիտի ստանայ Շաւարին ...ներկայ մատաղ սերունդը:

Շահնազ.

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԻԺԻՑ

---

29 Ապրիլ 96

1895 թիւն, դալայում շնորհիւ մի քանի տիկնանց կազմուցաւ Հայուհեաց բարեգործական ընկերութիւն որի նպատակն է Մանկական պարտէզ եւ կարուածքի արհեստանոց բանալ: Ընկերութիւնը կազմել է մի առ ժամանակ յետոյ, սկսում են հանգանակութիւն եւ հաւաքում է մի նշանաւոր գումար, բացի նուիրատուութիւնից նոյն ընկերութեան օգտին տուեցաւ մի ներկայացում Թիֆլիզի մշտական խումբի անդամ պ. Մ. Աղայեանցի մասնակցութեամբ մի առ ժամանակ անցնելուց յետոյ, վարչութիւնը վարձում է մի բակ, բերել է տալիս մի վարժուհի եւ սկսում է Արհեստանոցի եւ Մանկական պարտէզի գործունէութիւնը:

----Մանկական պարտէզի բացուիլը մեծ ուրախութիւն է պատճառում բոլոր ժողովրդին. որ մինչեւ իրենց երեխայի դպրոց գնալը, գոնէ քիչ թէ շատ կօգտի մանկապարտէզում եւ հետ. կմնայ փողոցային խաղերից: Պարտէզը սկսելուն պէս բոլորը ուղարկում են իրենց զաւակներին թէ հարուստ եւ թէ աղքատ: Անցնում է մի քանի շաբաթ եւ ահա վարչութեան որոշմամբ ուղարկում է անդորբազրեր երեխայոց հայրերին, թէ տէր Ձեր երեխայի համար 40 ղ. ի հարկ է ունեցողներն տալիս են, բայց չքաւորն որ հազիւ է կարողանում իւր օրական պիտոյքը հայթայթել ինչպէս կարող էր զոհացնել նրանց եւ բացայայտ է, որ մերժում է:

Վարչութիւնն այս իմանալով միւս օրւանից պատասխանում է չվճարողների զաւակներին:

Մեզ մնում է միայն զարմանալ վարչութեան այս որոշման վրայ: Աղքատ երեխայոց պարտէզ այցելելը նրանց տերտող ծախքերի մէջ չէր զցիլ, որովհետեւ նրանք արդէն մի վարժուհի վարձել են 20 աշակերտ չլինի 30 լինի նրանց համար ինչ նշանակութիւն ունի:

Նոյնը եւ կրկնում եմ Արհեստանոցի համար:

Եթէ վերցնեն նոյն իսկ իրենց կանոնագրութիւնը եւ ուշի ուշով կարդան առաջին յօդուածը, կտեսնեն որ կանոնագրութիւնից շեղուած են, ահա բովանդակութիւնը «Հայուհեաց Բար. ընկերութեան նպատակն է օգնել նահանգիս մէջ հայ իգական սեռի շրջաւոր դաստակարգի ազգային կրթութեան գործին եւ մի քանի անհրաժեշտ արհեստներ տարածել»:

Սրանով վարչութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում, որ իրենց այդ սխալ քայլը ուղղեն եւ չզրկեն կրթութիւնից այն անմեղ էակներին, որոնց յանցանքը եղել է իրենց ծնողաց չքաւորութիւնը միայն:

Սալ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ երկուշաբաթի (20 Մայիս) երեկոյեան ժամը 3 կէս ին Ն. Վեհափառ. Մուզաֆբէդդին Շահը ժամանեց Ղազվին, երեքշաբթի օրը կը մնայ Ղազվին այս օր ճանապարհ կ՚ընկնի դէպի Թէհրան եւ հաւատալի է, որ յառաջիկայ երկուշաբթի Ն.Վեհափառութիւնը ժամանէ Մայրաքաղաքս:

Վեհ Շահի ընդառաջ գնալու խնդիրը կարգադրող յանձնախումբը կազմուած է հետեւեալ անձինքներից... Գեր. Թովմասեան Մէլիքեան Գ. Գ. Մաթէոս գրիգորեան, Նիկողայոս Աղաանան, Պետրոս Աբրահամեան, Վաղարշակ բժշկեան, Մ՚իրայէլ Նղիազարեան Ղուկաս Վարդանեան, Մինաս Ալէքսանեան. Իսկանդար Վարդանեան. Նախագահութեամբ Գեր. փոխանորդ հօր: Այդ յանձնախումբը երեկ երեկոյ փոխանորդարանում առաջին նիստը ունեցաւ, առ ժամանակեայ դիւան կազմելուց յետոյ որոշուեցաւ մի ծրագիր կազմել ընդառաջելու հիմնական եղանակը որոշող, ի՛ միջի այլոց որոշուեցաւ մի արձանագրութիւն պատրաստել աղ ու հաց ներկայացնելու համար. Ն. Բարձ Սադրազամից խնդրել որ հայերի համար մի տեղ որոշի, ուր կը կանգնեցնեն մի յաղթական կամար, այդ կամարը կը շրջապատեն հայ հասարակութիւնը եւ հայոց դպրոցների աշակերտները, Վեհափառի գալուստը աշակերտները կողջունեն մի երգով, սովորութեան համաձայն շորս ոչխարներ կը զոհուին ապա կը ներկայացուի աղ ու հաց եւ մի ուղերձ: Ծախքերը հոգալու համար որոշուած է հանգանակութեան դիմել. թէեւ շատ ծանր է կրկին հանգանակութեան ձեռնարկելը, որովհետեւ այս տարի քաւական պատկառելի գումարներ է հանգանակուել Թէհրանաքնակ ժողովրդից զանազան քաղաքական եւ ստիպողական պահանջների համար այսուամենայնիւ ժամանակի սղութիւնը եւ պէտքի անհրաժեշտութիւնը ստիպեց կրկին ձեռք առնել այդ միջոցը:

Լսում ենք, որ քաղաքիս Ղազվինայ թաղի հայկազեան դպրոցում անցեալ շաբաթ օր տեղի է ունեցել մի փողոցային սկանդալ: Մի ոմն Կարապետ Պօղոսեան իրեն թոյլ է տուել այդ վարժարանը մտնել եւ ուսուցիչներից մէկի հետ իր ունեցած հաշիւները մաքրել, որը վերջացել է տարտփելի հայհոյանքներով եւ խայտառակութեամբ: Փոխանորդ հայրը եւ հոգաբարձութիւնը յանցաւոր են գտել ուսուցչին (երեւի նրա համար որ թոյլ չէ տուել անկոչ պարոնին իր գլուխը ջախջախելու) Այսպէս թէ այնպէս խնդիրը վերջացել է նրանով, որ վճռուել է պատժել Օրիորդաց դպրոցի անմեղ սանուհիներին: Հոգաբարձութեան հրամանով Օրիորդաց դպրոցը փակուել է: Այստեղ են ասել գիւղի էշակա չաթմադի, դէօնդի փալանի դէօյդի (ուժը էշին չը յաղթեց, դարձաւ սկսեց փալանը ծեծել):

Վեհ. Շահին ընդառաջելու կարգադիր մ՚ասնախումբը իր պատրաստած ծրագիրը ներկայացրեց Ն. Բարձ Սադրազամին: Ն. Բարձրապատուութիւնը յաղթական կամարը աւելորդ է գտել եւ տեղ է որոշել քաղաքաղուան մօտը, Ն. Բ. յայտնել է, որ Վեհ. Շահը երկուշաբթի օր պիտի ժամանէ:

Այսօր մեր ձեռքը հասաւ մի հանգանակութեան թուղթ որ ձեռնարկուել է Ալիանս Ֆրանսէզի (aliance fran-caise) ընկերութիւնը: Հանգանակութեան յայտարարութիւնից իմանում ենք որ այդ դրամով պիտի օգնեն այն ազգատ վարժարաններին, որոնցում ֆրանսերէն է տանդուում, որպան գիտենք այսպէս «ազգատ» վարժարան միայն մեկ հատ կայ Թէհրանում, այն էլ ուսումնասիրաց ընկերութեան դպրոցի թաղի Հայկական վարժարանն է:

Թէհրանի բաֆֆի ընկերութիւնն մեզ ղրկել է իւր անցեալ 95 թուականի եղծուական տպագրած հաշիւները. վերջապէս այդ հաշիւները (որ յանարին յանձնել էին ի տպագրութիւն) ազատեցան Ջամանոյ տպարանի փոշիներից: (en fin) Ընկերութիւնը 95 թուականում 94-ի գշիռովն հանդերձ մուտք է ունեցել 2329,50--դրան իսկ ծախսել է 2207,90 դրան որով գշիռը եղել է 121,60-դրան, ունեցել է 500-դրան տոկոսաբերը գումար նրա տոկոսով եւ մանր մունը տպարիներով 95 թուականի վերջը պատրաստ ունեցել է 695,57-դրան եւ 500-դրանի, էլ նոր գրքեր է ընդունել տուած:

Ներկայ համարում մենք տպագրեցինք մի տխուր երեւոյթի ուրուագիծը, որ պատահել է Թէհրանի Հայկազեան դպրոցում: Այդ ցոյց է տալիս թէ որքան անտէրութիւն է տիրում այդ դպրոցում, որ ամեն մի անյայտ մարդ կարողանում է մտնել այդտեղ և իր քիմքի համաձայն խայտառակութիւններ ստեղծել և անպատիժ դուրս գալով իւր գործին գնալ: Ապա ինչ է անում հոգաբարձութիւնը, ինչ է նրա պաշտօնը, կա՛յ արդեօք հոգաբարձութիւն. այս բոլորի պատասխանը կը լինեն այն խայտառակ դէպքերը որոնց ամբողջ տարիներ ականատես է եղել այդ գժբաղդ հաստատութիւնը. մի հաստատութիւն, որի վրայ սեւեռած է իւր յուսոյ աչքերը Թէհրանի հայ ժողովուրդը: Մենք չենք ուզում աւելի խորը թափանցել հասկանալու համար թէ արդեօք կոիսարքողներից որ մէկն է յանցաւոր. մենք այս դէպքում միայն և միայն յանցաւոր ենք գտնում հոգաբարձութեանը: Ի հարկէ հոգաբարձութիւնը եթէ ունենար հեղինակութիւն Կարապետներ, Թաթոսներ չէին համարձակուել իր դպրոցը ոտք կոխելով նրա ներդաշնակութիւնը խանգարել և ոտ միթէ առաջինն է, տասներորդը. քսաներորդը. չէ՞ որ այդ դէպքերը նոյն դպրոցի 6-7 տարեայ կեանքի անբաժան ընկերներն են եղած: Այս տխուր փաստերը ցոյց են տալիս օրէնքի կատարեալ բացակայութիւն: Այդ դէպքից յետոյ ուսուցիչը արձակուած է նմանապէս և վարժուհին: Լսում ենք որ նոր ուսուցիչ և վարժուհի պէտք է հրաւիրուեն, բայց մենք խորհուրդ կը տայինք հոգաբարձութեան, որ զուր տեղ ուսուցիչ որոնելու նեղութիւն չը քաշեն, այդ պայմանների հնազանդող ուսուցիչներ չկան աշխարհում, այլ պէտք է նորից ձուլել, ուրեմն նախ պէտք է պատրաստել մի ձուլարան: Բայց գուցէ մենք սխալւում ենք, գուցէ հոգաբարձութիւնը ճանաչում է ուսուցիչներ, որ եթէ աջ երեսներին ապտակ խփեն ձախը շուռ տան, եթէ նրանցից վերարկուներն ուզեն շապիկներն էլ հեռ տան

Արդէն մի քանի թերթերով յայտնեցինք որ Թէհրանի հայ ժողովուրդը վերջապէս սիժափեւելով զդացել է մի ազգային մարմնի գոյութեան անհրաժեշտութիւնը, մենք յայտնեցինք նաև, որ ամսոյս 11-ին կայացաւ մի ընդհանուր ժողով որ երկար վիճաբանութիւնից յետոյ որոշեց մի յանձնախումբ ընտրել, որի պաշտօնը լինի մի ծրագիր կազմել ազգային մարմնի իրաւունքների սահմանները որոշելու համար, բայց որովհետև ժամանակը անց էր, որոշուեցաւ թողնել մի ուրիշ անգամւայ։ Անցեալ կիրակի (19 Մայիս) ազգային փոխանորդարանում տեղի ունեցաւ այդ ժողովի շարունակութիւնը։ Ժողովը պիտի ընտրէր մի յանձնախումբ, խնդիրը պարզ էր սակայն դարձեալ տեղի տուաւ երկար վիճաբանութեան, ի միջի այլոց հարց բարձրացաւ թէ արդեօք բողոքական հայերն էլ պիտի մասնակցեն այդ ժողովին թէ ոչ. այդ խնդիրը ասելի տաւ աւելի սուր և կծու վիճաբանութեանց. բայց ժողովը արդարացի գտաւ այն առաջարկը, թէ քանի որ ազգային մարմնի իրաւունքների սահմանները դեռ որոշած չեն, աւելորդ է այդ տեսակ հարց յարուցանելը և ապա անցան յանձնախումբը ընտրելու գործողութեան։ Այս անգամ պէտք է ասած որ օրինաւոր ընտրութիւն կատարուեց, գաղտնի քուէարկութեամբ և ձայնից տուաւելութեամբ ընտրուեցան հետևեալ 8 անձնաւորութիւնները, որ փոխատարդ հօր նախագահութեամբ պիտի մշակեն ապագայ ազգային ժողովի գործառնութեան ծրագիրը։ Պարոնայք

Յովհաննէս-խան Մասէհեան	47	ձայնով
Իշխան Թովմասխան Մելիք.	40	,,
Ալբեռ Տէր Յովհաննէսեան	33	,,
Վարդարշակ Բժշկեան	31	,,
Վահան Մեսրոպեան	26	,,
Արսէն Մարգարեան	26	,,
Միքայէլ Եղիազարեան	22	,,
Մաթէոս Գրիգորեան	20	,,

Քէէին մասնակցում էին 54 անձինք հետևապէս բուռ օրինի՝ վերջին չորսը ձայնի բացարձակ առաւելութիւն չունենալով չէին կարող ընտրուած համարուել. բայց դիւանը ի նկատի ունենալով ժողով գումարելու դժուարութիւնները, նրանց ևս ընտրուած հրատարակեց։

Բաղարդ համարը մեզանից անկախ պատճառներով լոյս կը տեսնի Յունիս 5-ին

Անուրանալի է, որ երբ մամուլը դեռ չէ փշրած իրեն կաշկանդող շղթաները, երբ իւր թղթաթերթիկ թևերով չէ ասուանում ազատ մթնոլորտի մէջ, նա չէ ծառայում իւր սուրբ կոչման, չէ կարողանում հասարակաց կարծիքը խոնարհեցնել իւր առաջ։ Կաշկանդուած մամուլի գոյութիւնը աւելի ապէտ է մի ժողովրդի համար քան շահ, որովհետև ստեղծում է նրա մէջ մի տեսակ արհամարհանք, տարանում է նրա աչքում և իւր հետ միասին տարացնում նոյն ժողովրդին. այս միևնոյն դրութեան մէջ չէ գտնուում արդեօք Ցանկաստանում մամուլը։ Վերջին օրերս մեր ձեռքը հասաւ Կ. Պոլսում տպագրուող Սիմար պարսկերէն լրագիրը, ուր ի միջի այլոց ասում է «Ն. Վեհ. Նասրէդդին Շահ մի ժամանակ հիւանդ էր և այդ վիճակում յանկարծամահ է եղել» ( ) ի հարկէ մենք ոչ զայրանում ենք Սիմարի յայտնած այդ սարսափելի սուտի վրայ և ոչ էլ ծիծաղում, այլ դառնապէս ցաւում ենք, որովհետև մեզ քաջ ծանօթ են այն հանգամանքները, որից սարքուած Սիմարի խմբագրութիւնը յիմարաբար սրբագրութեան է ենթարկել Պարսկաստանի նահատակ Կայսեր մահուան շարժառիթը։

Մի ժամանակ լսում էինք, որ Ցանկաց կառավարութիւնը հայոց Շարականը սուրբ գրքերը և օրացոյցը գրաքննչական սրբագրութեան է ենթարկում և զարմանում էինք, բայց այդ կառավարութիւնը այս վերջին ժամանակներս այնպիսի երևոյթներ ի լոյս հանեց, որ այսօր երբ նշմարում ենք մեր աչքի առաջ կատարուած գործողութեանց յեղաշրջուած լոյս ընծայելը նոյն երկրի մամուլի մէջ, ամենևին չենք զարմանում, այլ պաղարիւնութեամբ բացականչում «այդ էլ կարելի է»։

Դավրէժի մեր մի թղթակիցը գրել է մի նամակ որով հերքում է մի ինչ որ լրագրում լոյս տեսած այն լուրը թէ «Ասոյ,Արևելեանը կաշառքով թղթակիցներ է հաւաքում» դա՝ միանգամայն աւելորդ համարեցինք տպագրելը, ոչ թէ նրա համար, որ վերաբերում է մի յոգւածի, որ գտնւել է մի «սուտերի պարկի» մէջ, այլ նրա համար, որ ամբողջ աշխարհին յայտնի է թէ հայլրագրութեան դեռ (աւելի բազդաւոր շրջաններում անգամ) չէ յաջողւել գէթ իր առօրեայ անհրաժեշտ ծախքերը ծածկել, ուր մնաց թէ կարողանար փող աւելացնել և կաշառք տալ։ 8 տարուց ի վեր Կովկասում հրատարակւող Մուրճի պարագը 2500 ռուբլու է հասնում և խմբագրութիւնը շարունակ հրաւէր է կարդում, որ գէթ բարեհաճեն այդ պարագի բաժնետոմսերը գնելով օգնել իրեն, բայց լսող կայ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ

Ընդարձակութեամբ ընդունելով հետևեալ հետաքրքիր և կարևոր յոդւածը, որ անգլիերէնից թարգմանել է, Տիկին կատարինէ Ս. Գեւոնեանցը շարունակաբար պիտի դնենք Աստղի մէջ։

Վերջին դեկտ. 13-ին Կ. Պոլսի Բրիտանական դեսպանը հետևեալ հեռագիրն է ուղարկում Լորդ Սոլզբիւրիին. «Կարելի է ասել, թէ հայերի համար եղած վերջին խռովութիւնները կատարելապէս ամայացրել են բոլոր այն նահանգները ուր բարենորոգումների ծրագիրը պիտի մտցուէր։ Սեծն Բրիտանիայից աւելի ընդարձակ մի երկրի բոլոր քաղաքները ի բաց առեալ Վան, Մուշ և Սասուն հայկական կուսակրոնները կատարեալ տեսարաններ էին ներկայացնում, մինչդեռ այդ միջոցում էլ բոլոր հայ գիւղերը քանդուել և ասերուել են։ Մի հատեստ հաշիւ ցոյց է տալիս որ 30,000 հոգի կոտորուել են, իսկ կենդանի մնացածներն էլ կատարեալ թշուառութեան մէջ են։ Շատ տեղեր էլ պարապուած են մահմեդականութիւն ընդունելու։ Այն լուրը, որպէս թէ հայերն են եղել խռովութիւնների գլուխ անհանդուրժելի է և անհաւատալի։

Թիւրք զօրքերի կոտորածներում ունեցած մասնակցութիւնն անկասկածելի է և հաստատուած»։

2ուրս օրից յետոյ, Վիէննայի Բրիտանական դեսպանը վերադրեալ հեռագրի պատճէնը յանձնելով, արտաքին գործոց նախարար Կոմս Գոլուչովսքիին, խնդրեց որ ուշադրութեամբ քննէ. որը քննելով յայտնեց թէ, այդ նկարագրութիւնը հարկաւ ճշմարիտ է և ազդու։ բայց ինչպէս արդէն ասել է. ոչ մի ճար չկայ, եթէ ոչ սպասել և տեսնել թէ Սուլթանը իւր խոստումները պիտի կատարէ կարգը հաստատելու համար այս առթիւ ամեն տեսակ խորհրդածութիւններ եղան. բայց Ն. Վսեմութիւնը, (կոմս Գոլուչովսքին) ուրիշ ոչինչ ճար չը կարողացաւ գտնել քան այն ինչ որ, մինչև այսօր միշտ կրկնել էր (Սուլթանին) նորան. և ասեց թէ ուրիշ ամեն տեսակ միջամտութիւն, կարող է Օթոման կայսերութեան քայքայումն առաջ բերել. բայց եթէ իսկապէս Կոմս Գոլուչովսքին ճանաչում է իրերի վիճակը, թող հաւատայ, թէ տէրութիւնների էլ բաղձանքը միայն այդ է, որոնք լաւ գիտեն, որ եթէ ամենամեծ նախազգուշութիւններ չլինեն, Արևելեան խնդրի վերաբացումը կարողէ վտանգի ենթարկել ամբողջ Եւրոպան ևս որ ամեն տեսակ գործողութիւն կամ միջամտութիւն կարողէ առաջ բերել այդ վտանգը, որն իսկապէս նշանակում է վառոդին կրակի կայծ տալ. որևէ յեղափոխութիւն կարող է. ամենածանր հետևանքն ունենալ։

Ուստի թող որ համոզուած մնայ նա (Կոմսը) որ Անատոլիայի վիճակն ինչքան էլ որ ողբալի և անտանելի լինի, նորէն չի կարելի միջամտել և կամ որևէ գործողութիւն ցոյց տալ, եթէ ոչ թողնել որ Սուլթանը վերջացնէ այն ինչ որ արդէն ձեռնարկել է ուր յաջողութիւն սեռնելն անկարելի է։

Իսկ 15 օրից յետոյ Աւստրիական Դեսպանն աւելի սարսափեցուցիչ լուրեր է սառնում. որով Ն. Վսեմութիւնը (Կոմսը) ողբալով ասում է թէ բացի տէրութիւնների Սուլթանին տրած դիմումներն էլ ուրիշ ոչինչ չի կարելի անել հայերի համար որոնցից, թերևս հազարաւորներն այսօր ճնշման և չարչարանքների տակ ոչնչացած և մնացածներն էլ (հայերի) ձեռուան խստութիւնից և սովից իսկապէս թշուառութեան կատարեալ սահմանն հասած մինչև գարնան վրայ գալը հարկաւ պիտի փչանան.

Կը Շարունակի.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից մեզ տեղեկացնում են, թէ կառավարութիւնը հրամայել է երկու հայերի ձերբակալեն, որանք, որպէս թէ ազատական նամակով փորձել են Հընչակեան կուսակցութեան համար դրամ առնել, այդ ձերբակալութեան ժամանակ, մի թիւրք ժանդարմ (հեծեալ ոստիկան) ոտանում է ձերբակալուած հնչակեանների մէկի գնտակովը։

---Daily News-ին տեղեկացնում են թէ ապրիլ 25-ին Կրէտէի «Հաջնոն վոլէյէն» գաւառում, թիւրք վենսրների և քրիստոնեայ ժողովրդի մէջ, ընդհարում է տեղի ունեցել որի պատճառն է եղել այն, որ թիւրքերը ուզեցել են, «Փրեվելիի» վանքն ապաստանած բարենորոգում պահանջող ժողովը անձնատուր լինելու հարկադրեն. բայց մեծ կորուստով յետ են մղել քրիստոնեաներից. որի մանրամասնութիւնը դեռ սպասում է

Կրետէից հասած վերջին լուրը հաստատում է, թէ թիւրք զինուորները Սէլիսում յարձակել են բարենորոգում պահանջող կոմիտէի վրայ, բայց յետ են մղել 20 հոգի զոհ տալով. և որ այդ միջոցին կրետացի մահմեդականները զինուելով, զօրքերին օգնութեան են հասել.

--- Ռէյթերի գործակալութիւնից տեղեկանում ենք, որ Մայիս 31-ին Ռուսիան ազդարարել է Բ. Դռան, թէ Կրետէի քրիստոնէից կոտորումը կարող է ծանր հետևանքներ ունենալ թիւրքիայի համար։

ՀԵՌԱԳՐԵՐ

Լոնդոն Յունիս 30-ին Ն. Տ. Դատարեալ քննութիւններից յետոյ յայտնուել է թէ Մոսկվի ազէտի ժամանակ 2700. հոգի սպանուելին որը առաջ է եկել ոստիկանութեան կարգապահութեան կատարեալ բացակայութեանը։ Ժողովուրդը խառնիխուռն թափառում է զանազան փոսերի մէջ և սանակոխ լինում, ուր արդէն սեղաններ էր պատրաստուել թագադրութեան առթիւ ճաշկերոյթ տալու նպատակաւ։

Լոնդոն Յունիս 31-ին Ն. Տ. ինչպէս յայտնուում է բոլոր (Եւրոպական) տէրութիւնները իմացած կրետէի խնդրի մասին, տեղեկութիւն է հասնում թէ Գանոան առարկում է տէրութիւնների Սուլթանի համերաշխ դիմումներին կրետէի խաղաղութեան համար։

Հրատարակիչ՝

Աստղ-Արևելեան Ընկերութիւն

Աբաօնատէր՝

Մակար Կ. Մակարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռ. ընկերութիւնն հայկական վարժարանի Աշակերտակից ասմ՝անց լինութիւնն Կիսի առաջիկայ Յունիս 3ին յետագայ ծրագրով։

Երկուշաբթի Յունիս 3-ին
ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

Երեքշաբթի Յունիս 4-ին
ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Չորեքշաբթի Յունիս 5-ին
ԳԱՂԴԻԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Հինգշաբթի Յունիս 6-ին
ՊԱՐՍԿԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Ուրբաթ Յունիս 7-ին
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆ

Շաբաթ Յունիս 8-ին

Աշխարհագրութիւն եւ պատմութիւն հաղցաքննութիւնն տեղի կունենայ վերոյիշեալ օրերում՝ առաւօտ ժամը 9ից մինչեւ 12, եւ կէսօր ժամը 3-ից մինչեւ 4-կէսին։

Տնօրինութիւն Հայկական վարժարանի։

Հաւատ-Հայ տպարան Թէհրան.